« 18 » դեկտեմբեր 2024թ. No 7343 - Ա

«ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Հունվարի 20-30, 2025թ., շարունակաբար, ք. Երևան (««Ազգային բժշկական պալատ» ՄՄ» ՀԿ գրասենյակ) կամ առցանց («Զում» հարթակ)

««Ազգային բժշկական պալատ» ՄՄ» ՀԿ

- Թիրախային լսարան՝ բուժքույրեր, մանկաբարձուհիներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 50 հոգի (առցանց), 300 հոգի (առկա)
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 31 տեսական կրեդիտ
- Կոնտակտ՝ 043007107

Օր 1՝ հունվարի 20	
16:00-19:00	**Դասախոսություն** Իմունային համակարգ: Վակցինալոգիայի հիմունքներ: Պատվաստանյութերի հիմնական տեսակները: Պատվաստանյութերի բաղադրիչները: Ադյուվանտներ՝ դերը, բնորոշումը, տեսակները
Օր 2՝ հունվարի 21	
16:00-19:00	**Դասախոսություն** Կոլեկտիվ իմունիտետ: Վարակիչ հիվանդությունների արմատական վերացում: Պոլիոմիելիտ՝ համաճարակաբանական առանձնահատկությունները, Հայաստանի «պոլիոմիելիտից ազատ» կարգավիճակի պահպանումը
Օր 3՝ հունվարի 22	
16:00-19:00	**Դասախոսություն** Դիֆթերիա՝ համաճարակաբանական առանձնահատկությունները, պատվաստումները: Փայտացում, պատվաստումների ազդեցությունը, նորածնային փայտացում: Կապույտ հազ՝ համաճարակաբանական առանձնահատկությունները, հիվանդության բեռը, պատվաստումները
Օր 4՝ հունվարի 23	
16:00-19:00	**Դասախոսություն** Մարդու պապիլոմավիրուսային վարակ՝ հարուցիչը, կառուցվածքը, պատվաստանյութերը, արգանդի պարանոցի քաղցկեղի վիճակագրությունը, պատվաստումների արդյունավետությունը և անվտանգությունը, միջազգային փորձը
Օր 5՝ հունվարի 24	
16:00-19:00	**Դասախոսություն** Գրիպ՝ ախտանշանները, բարդությունները, հիվանդության բեռը, պատվաստումներ: Պնևմոկոկային, մենինգոկոկային վարակների համաճարակաբանական առանձնահատկությունները, պատվաստանյութերը և դրանց կիրառումը
Օր 6՝ հունվարի 25	

16:00-19:00	**Դասախոսություն** Վիրուսային հեպատիտ Բ-ի համաճարակաբանական առանձնահատկությունները, պատվաստանյութերը, կիրառումը: Ռոտավիրուսային վարակ՝ պատվաստանյութեր, կիրառումը
Օր 7՝ հունվարի 27	
16:00-20:00	**Դասախոսություն** Կարմրուկի, կարմրախտի, խոզուկի համաճարակաբանական առանձնահատկությունները, պատվաստանյութերը, կիրառումը: Կարմրուկի համաճարակային իրավիճակը Հայաստանում
Օր 8՝ հունվարի 28	
16:00-19:00	**Դասախոսություն** Սառցային շղթա, պատվաստանյութերի և անվտանգ ներարկումների համար անհրաժեշտ պարագաների կառավարում
Օր 9՝ հունվարի 29	
16:00-19:00	**Դասախոսություն** Սառցային շղթայի սահմանումը, պատվաստանյութերի և անվտանգ ներարկումների համար անհրաժեշտ պարագաների պատշաճ կիրառումը
Օր 10՝ հունվարի 30	
16:00-19:00	**Դասախոսություն** Անվտանգ և արդյունավետ պատվաստումներին ներկայացվող պահանջներ: Հետպատվաստումային անբարեհաջող դեպքեր: Պատվաստումների հակացուցումներ

Դասավանդող՝ համաճարակաբան Գայանե Սահակյան: